ԿՐԹԱԿԱՆ

# ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՀԵՐՔՈՒՄ Է ՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

*Դեկտեմբերի 7-ին Վրաստանի քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի այն հերքում է՝ վերջերս սոցիալական ցանցերում տարածված Միասնական ազգային քննությունների անցկացման գործընթացում, արմատական փոփոխությունների կատարման մասին տեղեկատվությունը:*

Ինչպես նշված է հայտարարության մեջ, բացի դրանից, իբր իրականացվելու են նաեւ այլ փոփոխություններ:

Քննությունների գնահատման եւ ազգային կենտրոնի ղեկավար Սոփո Գորգաձեի հայտարարությամբ, ներկայումս աշխատանքներ են տարվում գործող համակարգի ուսումնասիրման եւ վերլուծության ուղղությամբ: «Գործընթացում ներգրավվել են միջազգային փորձագետներ, ոլորտի մասնագետներ, բուհերի ներկայացուցիչներ, այսինքն՝ բոլոր շահագրգռված անձինք: Մենք հապշտապ որոշումներ չենք ընդունի: Դա կարեւորագույն բարեփոխում է եւ ցավալի է, որ արդեն իսկ տարածվել է կեղծ տեղեկատվություն՝ իբր ընդունվել է կոնկրետ որոշում: Դա չի համապատասխանում իրականությանը»,- նշեց Սոփո Գորգաձեն եւ հավելեց, որ, նորամուծությունների ընդունման դեպքում, այն պաշտոնապես կիրապարակվի կենտրոնի կայքէջում:

Քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնը նաեւ տեղեկացնում է, որ 2019 թվականի Միասնական ազգային քննությունները կանցկացվեն առանց էական փոփոխությունների: Ինչ վերաբերում է թեստավորման ձեւաչափին, ապա այն կառնչվի միայն վրաց լեզվի եւ գրականության, աշխարհագրության, գրականության եւ օտար լեզուների քննություններին: Այդ փոփոխությունները պայմանավորված էին նախորդ տարիներին փորձի վերլուծության եւ ուսուցիչների հետ քննությունների արդյունքների քննարկման արդյունքում ստացված պարզաբանմանը: Թեպետ վերոնշյալ փոփոխությունները չեն անդրադառնա վրաց լեզվի եւ գրականության քննության նվազագույն իմացության նշանագծին:

Հիշեցնենք, որ, Միասնական ազգային քննությունների ընթացքում, դիմորդները հանձնում են չորս քննություն: Դրանցից երեքը՝ վրաց լեզու եւ գրականություն, ընդհանուր ունակություններ, օտար լեզուն պարտադիր են: Գրականություն, մաթեմատիկա, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, կիրառական եւ գեղարվեստ կամ քաղաքացիական կրթություն առարկաներից մեկը ընտրովի է:

# ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՍԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

*Հաջորդ կիսամյակից Վրաստանի հանրային դպրոցներում պիլոտային կարգով կներդրվի «Պաշտպանություն եւ անվտանգություն» նոր առարկան:*

Ինչպես տեղեկացրեց կրթության փոխնախարար Իրինա Աբուլաձեն, այդ դասը աշակերտներին դասավանդելու են համապատասխան վարժանք անցած զինծառայողները:

- Սույն նախագծի շուրջ մենք աշխատում ենք պաշտպանության նախարարության հետ: Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնի փորձագետները մշակել են վարժանքների հատուկ մոդել, որով էլ զինծառայողներն անցնում են վարժանքներ: Գարնանը, պիլոտային ծրագրի համար, նախարարությունը կառանձնացնի 10-20 դպրոցներ Թբիլիսիում եւ տարածաշրջաններում,- հայտարարեց փոխնախարարը՝ հավելելով, որ առարկայի նպատակն է, որ աշակերտները լավ ծանոթանան իրենց երկրի պատմությանը:




ԵՐԵԿՈ

# ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻՆ

*«Հավատքն անսասան է, պետականությունը՝ անշրջելի» - այս խորագրի ներքո ընթացավ Վրաստանի ու Հայաստանի պետական անկախության 100-ամյակներին եւ Հայաստանում քրիստոնեության հիմնադիրներ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների հիշատակին նվիրված երեկոն, որ տեղի ունեցավ դեկտեմբերի 1-ին, Թբիլիսիի «Art Hall» համերգասրահում:*



Միջոցառումը նախաձեռնել էր Վիրահայոց թեմը: Նրան ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դավիթ Ճիճինաձեն, Վրաստանի մշակույթի նախարարության ներկայացուցիչ Ալեքսանդրե Գրիգալաշվիլին, Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետ Արթուր Սարգսյանը, Հայաստանի Սփյուռքի նախարարության աշխատակից Տարոն Շագոյանը:

Երեկոն բացեցին Վիրահայոց «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը եւ թեմի մշակույթի բաժնի տնօրեն Սուրեն Աբրամյանը:

Երեկոյի համերգային բաժինն ընդգրկեց մայրաքաղաքում եւ Վրաստանի տարածաշրջաններում գործող հայ մշակութային կենտրոնների երգչախմբերի, ժողովրդական երգ ու պարի համույթների, ասմունքի, երաժշտական խմբերի, անհատ մենակատարների ելույթները: Համերգին մասնակցեց նաեւ Թբիլիսիի վրացական ժողովրդական «Մնաթե» պարային համույթը (գեղ. ղեկ.՝ Կախա Մարկոիշվիլի, Զազա Մժավանաձե):

Ավարտին, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը գնահատեց երեկոյին մասնակից մշակութային կենտրոնների հայապահպանության առաքելությունը եւ իր երախտիքը հայտնեց Վրաստանի պետությանը՝ երկրի հայ մշակութային արժեքների պահպանմանը ցուցաբերած աջակցության համար:

*ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

## ԷԼ Ի՞ՆՉ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ...



***Վերջերս տեղեկացա, որ Վրաստանում կանանց աշխատավարձը գրեթե 35 տոկոսով զիջում է տղամարդկանց ամսական աշխատավարձին: Էլ ի՞նչ գենդերային իրավահավասարության մասին է խոսքը: Հետաքրքիր է՛ մյուս երկրներո՞ւմ էլ վիճակը նույնն է:***

*Ա.Սարգսյան*

*Թբիլիսի*

Ցավոք, դուք իրավացի եք: Վրաստանում, վիճակագրական տվյալներով, 2017 թվականին 2016-ի համեմատ, կանանց միջին ամսական անվանական աշխատավարձը ավելացել է 5,3, տղամարդկանցը՝ 7,2 տոկոսով: Այդպիսով, կանանց միջին աշխատավարձը կազմում է 770 լարի, իսկ տղամարդկանցը՝ 1 197 լարի:

Վիճակագրության համաձայն, կանանց միջին աշխատավարձը տղամարդկանցից ցածր է 35%-ով: Տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձը, գրեթե բոլոր ոլորտներում, գերազանցում է կանանց աշխատավարձին:

Նույն միտումն է վավերացվել նաեւ աշխարհի մյուս երկրներում: Ընդհանրապես, աշխարհում կանայք միջինը 16-22 տոկոսով ավելի ցածր աշխատավարձ են ստանում, քան տղամարդիկ: Այսպես, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) զեկուցագրում նշված է, որ «73 երկրներից ստացված տվյալների հիման վրա, որոնք վերաբերում են աշխարհում աշխատողների 80 տոկոսին, աշխատավարձերի միջինացված գենդերային խզումը կազմում է 16 տոկոս»:

Փաստաթղթում բերված վիճակագրական տվյալների համաձայն, Ռուսաստանում տղամարդկանց ու կանանց աշխատանքի ժամավճարներում տարբերությունը կազմում է միջինը 22,9 տոկոս, Մեծ Բրիտանիայում՝ 23,2 տոկոս, ԱՄՆ-ում՝ 16 տոկոս, Հնդկաստանում՝ 34,5 տոկոս, Կորեայի Հանրապետությունում՝ 32,5 տոկոս, Չինաստանում՝ 19,4 տոկոս:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՀԱՐՈՒՍՏՆԵՐՆ Է'Լ ԱՎԵԼԻ ԵՆ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ



***ԱՄՆ-ի 400 ամենահարուստ մարդկանց կարողությունը, որոնք տեղ են գտել Forbes հանդեսի հրապարակված ցուցակում, 2018 թվականին հասել է ռեկորդային 2,9 տրլն դոլարի, ինչը 7 տոկոսով բարձր է անցյալ տարվա ցուցանիշից:***

ԱՄՆ-ի ամենահարուստ մարդկանց վարկանշի առաջին տեղը զբաղեցրել է Amazon-ի հիմնադիր եւ սեփականատեր Ջեֆ Բեզոսը՝ 160 մլրդ դոլար կարողությամբ: Այսպիսով, նա երկրորդ հորիզոնական է մղել Microsoft-ի հիմնադիրներից մեկին՝ Բիլ Գեյթսին, որն այս ցուցակը գլխավորում էր 24 տարի անընդմեջ: Նրա կարողությունը Forbes-ը գնահատել է 97 մլրդ դոլար: Վարկանիշի երրորդ տեղում ներդրող Ուորեն Բաֆեթն է՝ 88,3 մլրդ դոլար կարողությամբ: Ամենահարուստ ամերիկացիների ցուցակում չորրորդ տեղը զբաղեցրել է Facebook-ի հիմնադիր Մարկ Ցուկերբերգը՝ 61 մլրդ դոլար կարողությամբ, հինգերորդ տեղում համակարգչային ծրագրերի թողարկմամբ զբաղվող Oracle ընկերության հիմնադիր Լարի Էլիսոնն է՝ 58,4 մլրդ դոլար կարողությամբ, վեցերորդ տեղում՝ Alphabet ընկերության գլխավոր տնօրեն Լարի Փեյջը՝ 53,8 մլրդ դոլար կարողությամբ:

Յոթերորդ եւ ութերորդ դիրքերում Չառլզ եւ Դեւիդ Կոխ եղբայրներն են, որոնք զբաղեցնում են Koch Industries ընտանեկան ընկերության գլխավոր տնօրենի եւ գործադիր փոխնախագահի պաշտոնները: Նրանցից յուրաքանչյուրի կարողությունը գնահատվում է 53,5 մլրդ դոլար: Իններորդ հորիզոնականը պատկանում է Alphabet-ի նախագահ Սերգեյ Բրինին (կարողությունը՝ 52,4 մլրդ դոլար): Ամենահարուստ ամերիկացիների տասնյակը եզրափակում է Մայքլ Բլումբերգը՝ իրեն անունը կրող գործարար նորությունների գործակալության հիմնադիրը (կարողությունը՝ 51,8 մլրդ դոլար), հաղորդել է ՏԱՍՍ-ը

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

## ԻՆՉՊԵՍ ՆՎԵՐՆԵՐ ԸՆՏՐԵԼ ԵՎ ԻՆՉ ՆՎԻՐԵԼ ԱՄԱՆՈՐԻՆ

***Շուտով Ամանոր է, եւ ուրախությամբ պետք է փաստենք, որ վերջին տարիներին մեզ մոտ եւս ձեւավորվել է Ամանորին միմյանց նվերներ տալու ավանդույթը: Նվերներ սիրում են բոլորը, ոմանք ավելի շատ սիրում են ստանալ, մյուսները հավատացնում են, որ հաճույք են ստանում ուրիշների համար նվեր ընտրելիս: Դե, Ամանորը այն տոնն է, երբ նվերներ թե' նվիրում են, թե' ստանում: Այնպես որ, կարելի է մեծագույն հաճույքով նվերներ ընտրել հարազատների համար եւ սրտատրոփ սպասել՝ քեզ համար ընտրած նվերներին:***

Նվերներ ընտրելը առաջին հայացքից շատ հեշտ գործընթաց է, բայց եկեք խոստովանենք, որ բոլորիս կյանքում եղել են դեպքեր, երբ, տեղ հասնելուն պես, հարմար անկյուն ենք փնտրել ու ձեռքի փաթեթն արագորեն դրել այնտեղ՝ հնարավորինս շուտ հեռացնելով մեզնից... Կամ պարզվել է, որ մեր նվիրած իրը վերանվիրվել է, այսինքն՝ մեր ընտրությունն այնքան էլ ճիշտ չի եղել... Այսպիսով, ինչպես ճիշտ նվեր ընտրել, որպեսզի այն հպարտորեն հանձնել դիմացինին եւ նրանից լսել երախտիքի ու հիացմունքի խոսքեր:



***✓ Մի' ընտրեք նվերներ՝ պարզապես դա անելու համար***

Նվերը պետք է արտացոլի ձեր վերաբերմունքը տվյալ անձի հանդեպ: Ինչը նշանակում է, որ հյուր գնալիս տնից հինգ րոպե առաջ դուրս գալը, մոտակա խանութից մի բան վերցնելն ու գնալը ճիշտ տարբերակը չէ: Ընդունենք, որ «կաբեւորը՝ դատարկ ձեռքով չեմ» միտքը միայն ինքնամխիթարանք է, եւ չի օգնում նվիրածից չամաչել: Ձեզ նեղություն տվեք եւ, հյուրընկալվելուց մի քանի օր առաջ գնե, մտածեք, թե ինչ եք վերցնելու՝ տնից հինգ րոպե շուտ դուրս գալով:

***✓ Սովորեք լսել մարդկանց***

Եվ արեք դա բառիս բուն իմաստով: Մարդկանց հետ շփվելիս՝ մենք, կամա թե ակամա, մեր խոսքում նշում ենք, թե ինչն է մեզ պակասում, ինչ ենք հավանել վերջերս, ինչ կցանկանայինք ունենալ, բայց ինքներս մեզ համար չենք գնի եւ այսպես շարունակ: Սովորեք որսալ այդ մտքերն ու կիմանաք, թե ինչ նվիրել ձեր շրջապատի մարդկանց:

***✓ Հաշվի առեք նրանց նախասիրությունները***

Մարդկանց լսելով ոչ միայն կարող եք իմանալ, թե ինչ գնել, այլեւ՝ ինչ չգնել: Այո', այո', նվերի հարցում չսխալվելու համար՝ մի' անտեսեք մարդկանց նախասիրությունները, սովորությունները, տեսակն ու, ինչու ոչ, առողջական վիճակը: Ամանորին, որպես կանոն, մենք նվերներ ենք ընտրում մեր հարազատների, ընկերների ու ընտանիքի անդամների համար, կարճ ասած՝ մեր նեղ շրջապատի: Իսկ նրանց մասին մենք գիտենք ավելին, քան՝ հիշում ենք նվեր ընտրելիս: Օրինակ, եթե նվեր ընտրելիս հիշեք, որ ձեր ընկերուհին ալերգիա ունի բրդից, իսկ սիրելին նախընտրում է բնական մատերիալներ, բրդյա շարֆ կնվիրեք սիրելիին, իսկ արհեստական կաշվե ժամացույցը՝ ընկերուհուն: Իսկ մորաքույրը կենցաղային զրույցի ժամանակ կարող է վրդովված ձեզ պատմած լինել, որ կաթսաները ընտանիքի բոլոր անդամների համար են, ոչ թե միայն իր, եւ նրա համար նվեր ընտրելիս՝ կշրջանցեք խոհանոցային պարագաների բաժինը:

***✓ Ինքներդ ձեզ հավատարիմ մնացեք***

Եթե, այնուամենայնիվ, վստահ չեք, թե ինչ կհավանի նվիրառուն, վստահեք ձեր ճաշակին: Մի' գնեք բաներ, որոնք ինքներդ չեք հավանում եւ վստահ չեք, որ նա կհավանի: Եթե անգամ ձեր ճաշակով ընտրված նվերը նրան դուր չգա, միեւնույն է, նա կճանաչի ձեր ձեռագիրն ու կիմանա, որ ջանք չեք խնայել իր համար նվեր ընտրելիս:

*✓ Օգտվեք ամանորյա հրաշքներից*

Ամանորը հրաշքների ժամանակ է: Իսկ ինչ կասեք, եթե այդ հրաշքի հեղինակը դուք լինեք: Կարծում եք՝ հնարավոր չէ՞: Իհարկե հնարավոր է, եթե ձեր ամանորյա նվերները ընտրեք այնպիսի կազմակերպություններից, հիմնադրամներից, ընկերություններից ու անհատներից, որոնք ստացված հասույթը փոխանցում են բարեգործության: Այդ կերպ դուք գնում եք նվեր ձեր հարազատների եւ սիրելիների համար՝ միեւնույն ժամանակ ձեր լուման ունենալով որեւէ մեկի նվերի կամ օգնության հարցում: Իսկ ձեր նվերը է'լ ավելի մեծ արժեք կունենա նվիրառուի համար, երբ նա իմանա, որ ինքն էլ նման բարի գործի մաս է կազմում:

*✓ Ունիվերսալ ամանորյա նվեր*

Քանի որ Ամանորն ընտանեկան տոն է, եւ նվերներ պետք է գնեք ընտանիքի բոլոր անդամների համար, ստացվում է, որ, խանութ գնալիս, պետք է լինեք հաստ դրամապանակով: Եթե ունեք դրա հնարավորությունը, ապա շրջանցեք հոդվածի այս հատվածն ու, վերը նշված խորհուրդներին հետեւելով, ուղեւորվեք հաճելի գնումների: Բայց եթե հավատում եք, որ Ամանորից հետո կյանք գոյություն ունի, ապա, դրամապանակը ամբողջովին դատարկելու փոխարեն, ընտրեք ստորեւ նշված 10 ունիվերսալ ամանորյա նվերներից մեկը, որոնք կարող եք գտնել ինչպես թանկարժեք, այնպես էլ՝ բյուջետային խանութներում:

**(Շարունակելի)**

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ - Ինչո՞ւ են կանայք ավելի շատ ապրում, քան տղամարդիկ:*

*- Որովհետեւ նրանք երբեք զոքանչ չեն ունենում:*

*☺ - Ինչո՞վ է պատժվում երկկնությունը:*

*- Երկզոքանչությամբ:*

*☺ Կինը.*

*- Հիմարի մեկը, անբան, ամբողջ կյանքս, ջահելությունս նվիրեցի քե'զ, իսկ դու անբանի մեկը դուրս եկար...*

*Ամուսինը.*

*- Այ կնի՜կ, հերիք ա դիպլոմիտ հետ խոսաս...*

*☺ Ծրագրավորողը փողոցում տեսնում է աղջկա.*

*- Բարեւ Ձեզ, Դուք e-mail ունե՞ք:*

*- Ոչ, ինչո՞ւ:*

*- Ափսոս, կարող էինք ծանոթանալ:*

*☺ Հանդիպում են 2 ծրագրավորող.*

*- Լսել եմ ամուսնացե՞լ ես:*

*- Հա:*

*- Բա կնոջդ անունը ի՞նչ ա:*

*- Կարի.... չէ Անահ...մի խ ո ս ք ո վ ICQ#9876543210!:D:*

*☺ - Ասացեք, ինչպե՞ս գլխի ընկաք, որ ձեր բնակարանում օտար մարդ կա:*

*- Գիտեք, մեր ընտանիքում այնքան էլ ընդունված չէ հետեւից հանկարծակի աթոռով խփել գլխիս:*

*☺ Մաթեմատիկոսի կինն ընկերուհուն ասում է.*

*- Ամուսինս ինձ կատարյալ է համարում:*

*- Հարգելիս, մաթեմատիկոսի համար կատարյալը գունդն է:*

*☺ - Ուսուցչուհիդ իմացա՞վ, որ քեզ օգնել եմ:*

*- Այո, հայրի'կ, որովհետեւ նա ասաց .«Դու մենակ այսքան սխալ չէիր անի»:*

*☺ Երկու աշակերտ զրուցում են.*

*- Եթե մի ուսուցիչ չի կարող դասավանդել բոլոր առարկաները, ինչո՞ւ պիտի մենք սովորենք բոլոր առարկաները:*

*☺ Պա'պ, ես երբ եմ էնքան մեծանալու, որ ուր ուզեմ ու երբ ուզեմ գնամ, առանց մամային ասելու:*

*-Է՜, տղա ջան, սկի ես էդքան չեմ մեծացել...*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ՝ ԱՊՀ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

*Աշխատանքային այցով Ռուսաստանի Դաշնությունում գտնվող ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը դեկտեմբերի 6-ին, Սանկտ Պետերբուրգում, մասնակցեց Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի հերթական նիստին:*



2018թ. ամփոփիչ այս նիստի ընթացքում քննարկվել են ինչպես ԵԱՏՄ-ում նախորդ տարվա տարեկան աշխատանքները, այնպես էլ՝ ուրվագծվել են եվրասիական ինտեգրացիայի հետագա հեռանկարները եւ հաջորդ տարիներին կառույցի համար նախանշվող գերակայությունների շրջանակները:

Նիստի արդյունքում, ԵԱՏՄ անդամ պետությունների առաջնորդները ստորագրել են 18 փաստաթուղթ:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանը վերահաստատեց Հայաստանի կառավարության տեսլականը եվրասիական ինտեգրացիային Հայաստանի մասնակցության վերաբերյալ՝ դա անվանելով Հայաստանի գերակայություններից մեկը:

Նիստի ընթացքում որոշում է կայացվել 2019թ. ԵԱՏՄ-ում նախագահությունը փոխանցել Հայաստանին, ինչը ոչ միայն բավական լուրջ պատասխանատվություն է երկրի համար, այլ նաեւ հավելյալ հնարավորություններ է ստեղծում:

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԳԼԽԱՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԱՆԱՎԵՃԸ



*Դեկտեմբերի 6-ին, Հայաստանի Հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում, ավարտվեց նախընտրական մեծ բանավեճը, որը շարունակվեց շուրջ 3 ժամ եւ 30 րոպե:*

Բանավեճին մասնակցում էին դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերի ցուցակները գլխավորող գործիչները՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունից **Վիգեն Սարգսյանը**, «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից **Սուրեն Սահակյանը**, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունից **Արմեն Ռուստամյանը**, «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքից **Նիկոլ Փաշինյանը**, «Լուսավոր Հայաստան» կուսակցությունից **Էդմոն Մարուքյանը**, «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցությունից **Լեւոն Շիրինյանը**, «Ազգային առաջընթաց» կուսակցությունից **Լուսինե Հարոյանը**, «Մենք» դաշինքից **Արամ Սարգսյանը**, «Օրինաց երկիր» կուսակցությունից **Արթուր Բաղդասարյանը**, «Սասնա ծռեր» կուսակցությունից **Վարուժան Ավետիսյանը** եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից **Գագիկ Ծառուկյանը**:

Բանավեճի ընթացքում գործիչները խոսեցին իրենց կուսակցությունների ծրագրերի, Արցախյան հարցի կարգավորման, Հայաստանի տնտեսության, կոռուպցիայի դեմ պայքարի եւ մի շարք այլ հարցերի մասին իրենց դիրքորոշման վերաբերյալ: Խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ներկայացուցիչները հանդես եկան ամփոփիչ խոսքով, ապա սեղմեցին միմյանց ձեռքերը:

## ENEMO. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ ԱՆՑՆՈՒՄ Է ՀԱՆԳԻՍՏ ՈՒ ԽԱՂԱՂ

Հայաստանի խորհրդարանական ընտրությունները դիտարկող կազմակերպությունների եվրոպական ցանցի՝ ENEMO-ի միջանկյալ զեկույցի համաձայն՝ Հայաստանում նախընտրական քարոզչությունն անցնում է հանգիստ ու խաղաղ: Առաքելության ղեկավար Զլատկո Վույովիչը նշեց, որ, պետական ռեսուրսների չարաշահման կանխարգելման գործում, մեծ առաջընթաց կա նախորդ ընտրական գործընթացների համեմատ, որը վերաբերում է նաեւ ընտրական վարչարարության իրականացմանը:

Զլատկո Վույովիչն ասաց, որ Հայաստանում կա միանգամայն այլ քաղաքական կամք, որն աջակցելու է արդար ընտրություններին: «Հայաստանում, ինչպես նաեւ ցանկացած այլ երկրում, ընտրություններով զբաղվող կազմակերպությունները պետք է լինեն ազատ, անկախ եւ գործեն օրենքի շրջանակներում»,- ասաց նա:

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՐԵՆ Է ԱՆՑԿԱՑՎՈՒՄ

*Դեկտեմբերի 9-ին անցկացվելիք Հայաստանի Ազգային ժողովի արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավը «Իմ քայլը» դաշինքը գլխավորող Նիկոլ Փաշինյանը համարում է բավական արդյունավետ:*



- Փայլուն քարոզարշավ էր: Այս քարոզարշավի առանձնահատկությունն այն էր, որ կար մրցակցություն, այսպես՝ պայմանականորեն ասած, ֆեյսբուքյան իրականության եւ իրական կյանքի միջեւ: Եվ իրական կյանքը ջախջախեց «Ֆեյսբուք»-ին: Անկեղծ ասեմ, հույս ունեինք, որ մաժորային քարոզարշավ կստացվի, բայց նաեւ ինչ-որ տեղ հաճելի էր, ավելին էր, քան սպասում էի,- Երեւանի մետրոպոլիտենում քարոզարշավ իրականացնելու ժամանակ՝ լրագրողների հետ զրույցում ասաց Նիկոլ Փաշինյանը:

Նա նշեց՝ այս ընթացքում այն մասին է քաղաքացիներից ամենաշատ մեղադրանքը ստացել, որ հանրապետականները շարունակում են այդպես ազատորեն հոխորտալ:



## ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՕՐԱԿԱՐԳԸ

*Դեկտեմբերի 4-ին, Բրյուսել կատարած աշխատանքային այցի շրջանակներում, Հայաստանի ԱԳ նախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանը հանդիպել է Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինիի հետ:*

ԱԳՆ ղեկավարը եւ ԵՄ բարձր ներկայացուցիչը քննարկել են Հայաստան-Եվրոպական միություն օրակարգի մի շարք հարցեր: Այդ առնչությամբ զրուցակիցները կարեւորել են հունիսին Բրյուսելում ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի եւ նոյեմբերին Երեւանում ՀՀ-ԵՄ գործընկերության կոմիտեի անդրանիկ նիստերի անցկացումը, որոնք հնարավորություն ընձեռեցին լայնամասշտաբ համագործակցության Համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի շուրջ համապարփակ քննարկումներ ծավալելու համար:

Զրուցակիցներն անդրադարձան միջազգային եւ տարածաշրջանային օրակարգի մի շարք հրատապ հարցերի, մտքեր փոխանակեցին Իրանի միջուկային ծրագրի շուրջ վերջին զարգացումների վերաբերյալ:

### ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Դեկտեմբերի 5-ին, Միլանում, ԵԱՀԿ նախարարների խորհրդի շրջանակներում, կայացավ Հայաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Զոհրաբ Մնացականյանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի հանդիպումը, որի արդյունքներով կողմերը պայմանավորվել են առաջիկայում շարունակել հանդիպումները՝ պահպանելով չեւավորված դինամիկան:*

*Հանդիպմանը նախորդել էր Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի, Ստեֆան Վիսկոնտիի, Էնդրյու Շոֆերի եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի հետ:*

### ՀԱՄԱՆԵՐՄԱՄԲ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ 549 ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼ

*2018 թվականի նոյեմբերի 6-ից ուժի մեջ մտած «Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2800-ամյակի եւ Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» Հայաստանի օրենքի շրջանակներում դեկտեմբերի 6-ի դրությամբ, ազատ է արձակվել 549 դատապարտյալ:*

### ԿՈՐԾԱՆՎԵԼ Է ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՈՒ-25 ՄԱՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԹԻՌ

*Դեկտեմբերի 4-ին, ժամը 10.20-ի սահմաններում, կորել էր կապը ամենօրյա մարտական պատրաստության պլանով ուսումնամարզական թռիչք իրականացնող ՀՀ զինված ուժերի ՍՈՒ-25 մարտական ինքնաթիռի հետ: Ինքնաթիռը կործանվել էր Մարալիկի տարածաշրջանի լեռներում: Ինքնաթիռը թռիչքային երթուղի էր դուրս եկել Գյումրու օդանավակայանից: Ինքնաթիռի վթարի հետեւանքով մահացել են օդաչուներ՝ փոխգնդապետ Արմեն Բաբայանն ու մայոր Մովսես Մանուկյանը:*

*Հայաստանի քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում քննություն է տարվում՝ պարզելու երկրի զինված ուժերի ՍՈւ-25 մարտական ինքնաթիռի վթարի պատճառները:*

### ՄԱՀԱՑԵԼ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ, ՌՈՒՍ ԳՐՈՂ ԱՆԴՐԵՅ ԲԻՏՈՎԸ



*Մոսկվայում, 81 տարեկանում մահացել է հայտնի գրող, հայերի մեծ բարեկամ Անդրեյ Բիտովը:*

*Ռուս գրողը Հայաստանի պատվավոր քաղաքացի էր, ԵՊՀ պատվավոր դոկտոր:*

*Նա «Հայաստանի դասերը» գրքի համար դարձել է «Յասնայա պոլյանա» գրական մրցույթի հաղթողը «Ժամանակակից դասականներ» անվանակարգում:*

*Անդրեյ Բիտովը ծնվել է 1937 թվականին, Լենինգրադում: Բլոկադայի ժամանակ տարհանվել է Ուրալ, հետո՝ Տաշքենդ: Գրել սկսել է 1956 թվականից: Պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Մեծ գունդ» վերնագրով (1963թ.), խստորեն քննադատվել է: Սակայն Բիտովի գրքերը շարունակում էին լույս տեսնել: 1979թ.-ին նա դառնում է «Մետրոպոլ» չգրաքննվող ալմանախի հիմնադիրներից մեկը:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԴԵԿՏԵՄԲԵՐ



*11.12.2018. Սուրբ Կոռնելիոս հարյուրապետի եւ Շմավոնի՝ Քրիստոսի ազգականի, որ խաչվեց Երուսաղեմում եւ Ջմյուռնիայի Պողիկարպոս Հայրապետի եւ արեւելքի սուրբ վկաների*

*15.12.2018. Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետ, Սուրբ Մարուգե ճգնավոր եւ Սուրբ Մելիտոս եպիսկոպոս*

## ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆ

### ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ՍՊԱՆԵՐԸ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

*Դեկտեմբերի 4-ին, Թբիլիսիում մեկնարկել է Վրաստանի ՆԳՆ-ի՝ հասարակական կարգի պահպանության սպայախմբի աշխատանքը:*



Ինչպես հայտարարում են Ներքին գործերի նախարարությունում, իրավակարգի սպայի ինստիտուտը ներկայացնում է քրեական ոստիկանության նոր ստորաբաժանումը, որը փուլ առ փուլ պետք է փոխարինի քրեական ոստիկանության տարածքային ուղղությանը եւ տարածքի տեսուչի հնացած ինստիտուտին: Գերատեսչության տեղեկությամբ, իրավակարգի տեսուչը հանրությանը միտված ոստիկանական գործունեության մոդելն է, որը աշխարհում հանցանքի կանխարգելման ապացուցված գործիք է: Բաց մրցույթի շնորհիվ՝ բնակչությունից, իրավակարգի սպայի թափուր աշխատատեղի համար, ընտրվել են թեկնածուներ, որոնք այժմ անցնում են ուսման ինտենսիվ դասընթացներ: Հասարակական կարգի պահպանության սպայախումբը նորույթ է Վրաստանի ՆԳՆ-ում, նրանք կփոխարինեն շրջիկ տեսուչներին: Թբիլիսիից հետո նմանատիպ սպայախմբեր կլինեն նաեւ երկրի մնացած շրջաններում:

## ՓԱՌԱՏՈՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐՈՎ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ «ՄԻՍՍ ՏԻԵԶԵՐՔ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

*Miss Universe-2018 գեղեցկության միջազգային մրցույթում, որը Թաիլանդում մեկնարկելու է դեկտեմբերի 17-ին, Վրաստանը կներկայացնի 25-ամյա մոդել Լարա Յանը:*



Լարան Թաիլանդ է մեկնել նոյեմբերի 28-ին: Նա, ինքնաբերաբար, Miss Universe մրցույթին մասնակցելու իրավունք է ստացել՝ արժանանալով «վիցե-միսս Վրաստան-2017» տիտղոսին: Մոդելը ծնունդով Թելավիից է, երկար ժամանակ ապրել է Ռուսաստանի Չեբոկսարի քաղաքում, ապա վերադարձել է հայրենիք: «Երեք տարի է՝ ես ապրում եմ Թբիլիսիում: Ես միշտ էլ շատ եմ ճանապարհորդել, բայց աշխատել եմ վերադառնալ հայրենիք, որովհետեւ շատ եմ սիրում Վրաստանը: Մենք, հիմնականում, ապրել ենք Ռուսաստանում: Մայրս վրացուհի է, իսկ հայրս՝ հայ, որը ծնվել ու մեծացել է Վրաստանում»,- պատմել է Լարան:

Մոդելային կարիերան Լարան սկսել է Ռուսաստանում, երբ 17 տարեկան էր: «Դպրոցը, այդ թվում՝ նաեւ երաժշտական, ես ավարտել եմ Ռուսաստանում: Իմ մոդելային կարիերան նույնպես այնտեղ է սկսվել:»,- նշել է Լարան:

## ՍՊՈՐՏ

### ԲԱԹՈՒՄԻՆ՝ ԵՎՐՈՊԱՅԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔ




Բրյուսելում, Եվրոպայի մայրաքաղաքների եւ քաղաքների սպորտի ֆեդերացիան (ACES Europe) Բաթումիին պաշտոնապես շնորհել է 2019 թվականի Եվրոպայի սպորտի քաղաքի կարգավիճակ:

Մրցանակաբաշխության արարողությունն անցկացվել է Եվրոպայի խորհրդարանում, որտեղ տիտղոսը եւ դրոշը ստացել է Բելգիայում հատուկ այցով գտնվող Բաթումիի քաղաքապետ Լաշա Կոբախիձեն:

ACES Europe-ի կողմից պատրաստված եզրահանգման համաձայն, Բաթումին լավ օրինակ է սպորտի, կրթության եւ առողջության տեսանկյունից, որը ներկայացնում է ACES Europe-ի գլխավոր նպատակը, օրինակելի են սպորտային քաղաքականությունը եւ ենթակառուցվածքը, ծրագրերը եւ ակտիվությունները:

ACES Europe-ն ամեն տարի քաղաքներին շնորհում է «Եվրոպայի սպորտի մայրաքաղաք», «Եվրոպայի սպորտի քաղաք», «Եվրոպայի սպորտի համայնք» եւ «Եվրոպայի սպորտի փոքր քաղաք» կարգավիճակները:

### ՖՈՒՏԲՈԼ. ԱՆՑԿԱՑՎԵՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 2-ին, Իռլանդիայի մայրաքաղաք Դուբլինում անցկացվեց Եվրոպայի 2020 թվականի առաջնության ընտրական փուլի քվեարկությունը:

Ելնելով այն բանից, որ Վրաստանի հավաքականը ազգերի լիգայի «D» դիվիզյոնում իր ելույթը ավարտել էր լավագույն արդյունքով, քվեարկությունում հայտնվել էր 4-րդ զամբյուղում, որտեղ հայտնվել են նաեւ՝ Հունգարիան, Ռումինիան, Հունաստանը, Ալբանիան, Մոնտենեգրոն, Կիպրոսը, Էստոնիան, Սլովենիան եւ Լիետուվան: Վրաստանի ազգային հավաքականը, «D» խմբում ԵՎՐՈ-2020-ի ուղեգրի համար, կպայքարի Շվեյցարիայի, Դանիայի, Իռլանդիայի եւ Ջիբրալթարի հետ:

Հայաստանի հավաքականն ընդգրկվեց «J» խմբում, որտեղ մրցելու է Իտալիայի, Բոսնիա եւ Հերցեգովինայի, Ֆինլանդիայի, Հունաստանի եւ Լիխտենշտայնի հավաքականների հետ:

Նշենք, որ, որակավորման փուլում, «ԵՎՐՈ 2020»-ի համար կհայտնվեն 20 մասնակիցներ, մնացած 4 տեղերը կլրացնեն ՈՒԵՖԱ-ի ազգերի լիգայի դիվիզիոնների հաղթողները: Նախընտրական փուլը կանցկացվի 10 տուրով: Այն կմեկնարկի 2019 թվականի մարտի 21-ին եւ կավարտվի 2019 թվականի նոյեմբերի 19-ին: Հյուրընկալող թիմեր. Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլը հյուրընկալելու է 12 երկիր: Այդ պատճառով մրցաշարի գոյության պատմության մեջ առաջին անգամ, ոչ մի հյուրընկալող ավտոմատ կերպով չի լինելու մասնակից:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Ոչ լեգալ: 9.Փորձագետների խումբ՝ մրցույթի մասնակիցներին գնահատելու համար: 10.Քարթլիի թագավորներից: 11.Քաղաք Չեխիայում: 13.Հարսնացուի հատուցագինը: 16.Մերձարեւադարձային միրգ: 17.Կարգ, գիծ: 19.Կատվազգի գազան: 22.Ավտոմոբիլի թափքի տեսակ: 24.Ռազմանավի տեսակ: 25.Մայրցամաքային ծանծաղուտ: 27.Տոմս չունեցող: 29.Զամբիայի մայրաքաղաքը: 32.Սպորտի երեք վարժություններից բաղկացած մարզաձեւ: 33.Վրացի գրող … Ճոնքաձե: 35.Սարքավորում: 37.Մեքենան վարելու հարմարանք: 39.Ծծմայր, դայակ: 40.Ա.Դյումայի «Երեք հրացանակիրները» ստեղծագործության հերոսներից: 43.Ժառանգականության գործառնական եւ կառուցվածքային միավոր, որը վերահսկում է որոշակի հայտանիշի կամ հատկության զարգացումը: 44.«Այն գործի կեսն է»: 47.Աղոթք «… Մարիա»: 49.Միջին չափի հյուրանոց: 50.… տեղին: 53.Պղնձե սկուտեղ: 54.Քաղաք Բելգիայում: 55.Երբեւիցե, բնավ: 57.Գետ Ռուսաստանում: 58.Շվեյցարացի ֆուտբոլիստ Դանիել…:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Փղի քիթ: 2.Գետ ՌԴ-ում: 3.Միշտ: 4.Ջորեղ: 5.Նորվեգացի հետախույզ … Ամունդսեն: 6.Կինոնկար: 8.Արտասվող: 12.Ոչխարի «հագուստը»: 14.Գետ Արեւելյան Ասիայում: 15.Սահմեդական կրոնավոր: 18.Պապուասների լեզուներից մեկը: 19.Ջոհաբերության բլիթ (հին Հունաստան): 20.Քաղաք Ինդոնեզիայում: 21.Քարթլիի թագուհի, Վրաց Ուղղափառ եկեղեցու Սրբերից: 23.Աշոտը՝ փաղաքշական: 26.Ականջ դնել: 28.Տկար, նիհար, հյուծված: 29.Փիլիսոփա՝ հնագույն Չինաստանում, Դաոսականության ականավոր դեմքերից … Ցզի: 30.Կշտամբանք: 31.Մասերի բաժանել: 34.Անգլիացի ծովակալ: 36.Նիրհ: 38.Ընտանի կենդանի: 41.Հնագույն ազգ՝ Հարավային Կովկասում: 42.Գերմանական ավտոմեքենա: 45.Մոդայիկ ինքնատիպություն: 46.Կթող սարք: 48.Արեւմտահայ բանաստեղծ, փիլիսոփա … Տեմիրճիպաշյան: 51.Օր-օրի, օր … օրե: 52.Սուր եւ բարձր աղաղակ՝ բացականչություն: 56.Բիլիարդի խաղածող:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հակոբյան: 4.Հրազեն: 7.Առաքել: 9.Վարդան: 11.Որ: 12.Արուս: 15.Այն: 16.Նարե: 18.Պամիր: 19.Ցո: 20.Կորեա: 22.Կապ: 23.Տուֆակերտ: 25.Նեսո: 29.Բիլայն: 30.Աղիք: 31.Արկ: 32.Ծայր: 33.Ուրագ: 35.Անագ: 36.Պիոն: 37.Վարժ: 39.Ապարան: 40.Տիրան: 41.Մաղձ: 43.Սարն: 44.Արագած: 47.Լաերտ: 48.Ամազոն: 49.Աշոտ: 50.Անհամ: 51.Իսկ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հրատապ: 2.Յալթա: 3.Նովենց: 4.Հուրոն: 5.Զինգեր: 6.Նախաբան: 8.Առում: 10.Դրական: 13.Րաբունի: 14.Սիրամարգ: 17.Րոպե: 21.Լեռնային: 24.Տրական: 26.Սառա: 27.Կիկաբիձե: 28.Վարուժան: 29.Բյուրական: 34.Ասալա: 36.Պանամա: 37.Վաստակ: 38.Անա: 40.Տղան: 42.Ալոճ: 45.Գահ: 46.Ծամ:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445